ղոպտող ու գռփող, կաշառառու, դատարանում անիրավ, կաշառքով կեղծում էր դատը: Երբ մեկը որևէ մեկից գանգատվում էր, առանց քննության տուգանք էր առնում, եթե մի փողի հարց էր, քսան փող էր առնում, այդպես էլ իմացիր ամեն բան: Շեներում բազմացան գողերը, ճանապարհներին ու հանդերում ավազակները: Քանզի ավազակները համարձակ մտնում էին ոչխարների փարախները և քշելով տանում էին, գողերը մտնում էին գոմերը, անասունները աներկյուղ հանում, տանում էին: Եթե գողերին բռնում և տանում էին իշխանի մոտ, նա առանց պատժի տուգանք էր առնում և արձակում: Նրանք գնում և դարձյալ գողություն էին անում:

Արարատյան երկրում մեծ տագնապ գոյություն ուներ: Հազար հարյուր քառասունութ (1699) թվին այսպես էր, որ գրեցինք, իսկ ապագան Աստված գիտե:

ԳԼՈՒԽ ԿԵ
ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՀԸ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՈՎ

Կաթողիկոս Նահապետը Սուրբ Էջմիածնում իր գործին էր՝ շինություններ էր ավելացնում Էջմիածնի Սուրբ Աթոռին ու բոլոր վանքերին: Բայց չափազանց խիստ էր հանցավորների նկատմամբ, եթե մեկը որևէ հանցանք էր գործում, սա բռնում հրապարակավ կախում և գանահարում էր և մարմնավոր իշխանությունների միջոցով տուգանում էր. խուզում էր մորուքն ու մազերը, բանտ էր նետում, շղթայում էր: Այսպես ահարկու էր բոլոր եկեղեցականների ու քահանաների նկատմամբ: Այս բանի համար սնագլուխներից ոմանք վիրավորվեցին մեր երկրից և գրավոր միաբանվեցին Նախիջևանի ու Գողթանի եպիսկոպոսներին: Եվ Ստեփանոս վարդապետին, որ Սպահանի ու Ջուղայի առաջնորդն էր, գրեցին, թե այս կաթողիկոսը խախտեց ամեն կարգ ու օրենք, որ սահմանել էին մեր նախնիները: Ինքը ինչպես կամենում է, այնպես է վարվում՝ առանց գրքի կանոնների ու վկայությունների: Եվ իսպառ վերացան մեր նախնիների դրվածքները: Շատ այլ սուտ ամբաստանություններ գրեցին նրան և ասացին՝ դու եկ և եղիր մեզ կաթողիկոս, իսկ մենք հնազանդ կլինենք քո հրամաններին, թերևս մեր կարգն ու կրոնը ուղղվեն:

Այս գրեցին և կնքածը տվին Մատթեոս անունով կարբեցի մի վարդապետի՝ Բատրաղեն մականունով: Սա նամակը առավ, գնաց Սպահան և տվեց Ստեփանոսին: Սա կարդալով, ամեն ինչին տեղեկացավ, կարծեց, թե հավաստի ու ճշմարիտ է, բայց վերջը և մարգարեի կողմից ասվածը չիմացավ՝ թե եթե տերը տունը չի շինում, փուչ է*:

Եվ նրանց սուտ խոսքերից խաբվեց մեծ ճգնավոր Ստեփանոսը և հետևեց սնափառության: Եվ մեծ գանձեր ծախսեց արքունիքում, շատ միջոցների միջոցով արքունիքից կաթողիկոսության հրաման առավ, որ ռաղամն է, եկավ Սուրբ Էջմիածին:

Նախապես իր աշակերտ Աղեքսանդրոս վարդապետին ուղարկեց, որ գնա Նահապետին ուղարկի Տաթևի վանքը, ինքը նստի տեղապահ մինչև որ ինքը՝ Ստեփանոսը կգա: Իսկ Նահապետը ելավ Սուրբ Էջմիածնից, չգնաց Տաթև[180], այլ գնալով Թավրիզ՝ մտավ արքունիք, որին իրենք կոչում են Շահոջախի, ով որ այնտեղ մտնում է, թեկուզ մահապարտ էլ լինի, ոչ ոք իրեն որևէ բան չի ասում: Ապա Ֆարզալի խանի հետ եկավ նաև Ստեփանոսը և միասին գնացին Երևան: Նահապետը նույնպես նրանցից հետո գնաց և նստեց Խնկյալ Ջորգեղը, որ Ջորագեղն է:

Ստեփանոսը օրհնվեց կաթողիկոս, բայց կաթողիկոսության իշխանությունը վարել չկարողացավ: Քանզի Նահապետը բազմաթիվ բարեկամներ ուներ թե մեր երկրում և թե Սպահանում, որոնք չէին կամենում Ստեփանոսի կաթողիկոսությունը. ինչպես ջուղայեցի ոմն Ավետիս, որ երբեմն եղել է Ջուղայի քաղաքագլուխ, որ կոչվում է քալանթար: Սա թագավորի հարկադրանքով ուրացավ Քրիստոսին և իր երկու դուստրն էլ տվեց նրան, դարձավ մեծ ինքնիշխան շատերի վրա. սա Նահապետի բարեկամն էր, որ մտավ Շահ Հուսեին թագավորի մոտ և մեղմ կերպով հայտնեց նրան, թե հայերը օրենք ունեն, քանի նրանց կաթողիկոսը կենդանի է, այլ մեկը կաթողիկոս չի կարող լինել: Եթե մեռնի կամ իր կամքով հրաժարվի, ապա այլ մեկին ողջ ազգի ընտրությամբ կաթողիկոս են նշանակում: Իսկ այս Ստեփանոսը առանց ազգի ընտրության ինքնագլուխ կաթողիկոս է եղել, մինչդեռ ահա առաջին կաթողիկոսը կենդանի է:

*Սաղմ. ՃԻԶ 1: